ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» մարտի 2022 թվականի N: 134-ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԹԱՎՇՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՂԱԶԱՆՉԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N122-Ա ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N142-Ա ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N307-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 4-րդ կետի, 5-րդ կետի 2-րդ ենթակետի, 6-րդ կետի, 7-րդ կետի, 9-րդ կետի 2-րդ ենթակետի, 11-րդ կետի, 12-րդ

կետի, 16-րդ կետի, 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունիսի 3-ի N01/09.3/11888-2021 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 10-ի N16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N5 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N4 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի ապրիլի 22-ի N22 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N7 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N5 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի ապրիլի 6-ի N1 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Էդգար Սարգսյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Լիպարիտ Մարտիրոսյանի և Աստղիկ Ալեքսանյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թավշուտ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Սուրեն Սարգսյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Հուսիկ Հովհաննիսյանի և Մուշեղ Շահբազյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված՝ անդամներ Արկադիկ Մուրադյանի և Աիդա Շահբազյանի լիազորությունները:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Արսեն Վարդանյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Նարինե Մինասյանի և Արմեն Դավթյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Լուսինե Սիմավոնյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Քաջիկ Թովմասյանի և Վիոլետա Շահինյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Նինա Պողոսյանի և Վիկտորիյա Մարգարյանի լիազորությունները:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Էդգար Միքայելյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Լեյլի Ասլանյանի և Կարապետ Մխչյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Սրապ Հարությունյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Արփի Միքայելյանի և Մարզպետ Հակոբյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Եղիսաբեթ Ղուկասյանի և Ալինա Գասպարյանի լիազորությունները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի անվանական կազմը 3 տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N:51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N122-Ա որոշումը:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N:51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N:142-Ա որոշումը:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N:51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N:307-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի մարտի «18» N134-ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԹԱՎՇՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՂԱԶԱՆՉԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ

1.	Արմենակ Արամյան Վասյա Արշակյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված,
2.	Սեդա Մարգարյան Հովհաննես Գաբրիելյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
3.	Արկադիկ Մուրադյան Լուսինե Սիմավոնյան Սրապ Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
4.	Էդգար Սարգսյան Մուշեղ Շահբազյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
5.	Լիանա Խանսուլյան Տաթևիկ Աբրահամյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
6.	Մարզպետ Հակոբյան Արփի Միքայելյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ

		առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
7.	Արմինե Եգանյան Աիդա Շահբազյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Թավշուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
8.	Նինա Պողոսյան Փիրուզ Մուրադյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
9.	Ալինա Գասպարյան Եղիսաբեթ Ղուկասյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է